



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

9 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սամվել Ալավերդյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սամվել Ալավերդյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի փետրվարի 23-ին)՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 181 հոդվածը այնքանով, որքանով որպես նոր երևան եկած հանգամանք չի նախատեսում

հանգամանքների ի հայտ գալը, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը, ի տարբերություն քրեական եւ քաղաքացիական դատավարությունները կարգավորող համանման դրույթների, սահմանափակում է արդարադատության մատչելիության իրավունքը եւ վիճարկվող դրույթին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորում է նաեւ օրենսդրական բացը մատնանշելով:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն արձանագրում է, որ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես, 05.02.2010թ. ՄԴՈ-864 եւ 14.09.2010թ. ՄԴՈ-914 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների միջոցով ձեւավորել է այն չափանիշները, որոնք հիմք են հանդիսանում օրենքի բացի խնդիրը սահմանադրական դատարանի քննության առարկա համարելու համար: Մասնավորապես, ՄԴՈ-864 որոշմամբ ամրագրված է. «... Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: Զարգացնելով հիշյալ իրավական դիրքորոշումը՝ ՄԴՈ-914 որոշմամբ ամրագրված է. «...օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ելնելով քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Քաղաքացի Սամվել Ալավերդյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Մույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝